

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԻՄԻԱ

**Ջ. Թ. Կարապետյան, Ա. Ս. Գալստյան.** Նոր լակտոն-հետերոցիկլերի սինթեզը 2-(2-էթօքսի-3-բրոմալրոպիլ)-2-էթօքսիկարբոնիլ-4-բութանոլիդի հիման վրա էջ. 3–5

2-(2-էթօքսի-3-բրոմալրոպիլ)-2-էթօքսիկարբոնիլ-4-բութանոլիդի փոխազդեցությունից պիպերիդինի, մորֆոլինի և ռոդանինի հետ սինթեզվել են նոր լակտոն-հետերոցիկլեր:

**Կ. Ռ. Գրիգորյան, Ա. Գ. Ղազարյան.** Մարդու շիճուկային ալբումինի և գանգլերոնի փոխազդեցության մեխանիզմը էջ. 6–10

Ուսումնասիրվել է գանգլերոնի (կծկումային և ցավազրկող դեղամիջոց) և մարդու շիճուկային ալբումինի (ՄՇԱ) միջև փոխազդեցությունն ՈւՄ կլանման և ֆլուորեսցենտային սպեկտրադիտման եղանակների օգնությամբ: ՄՇԱ-ի ֆլուորեսցենտային մարման մեխանիզմը քննարկվել է՝ տարբեր ջերմաստիճաններում (298, 303 և 309 Կ) փոխազդեցությունների հետազոտման հիման վրա: Գնահատվել են Շտերնի-Ֆոլմերի հաստատունը ( $K_{SV}$ ), մարման արագության հաստատունը ( $k_q$ ) և բիմոլեկուլային մարման ակտիվացման էներգիան ( $E_a$ ): Մարման մեխանիզմը հաստատելու համար օգտագործվել են էլեկտրոնային կլանման սպեկտրները:

**Ջ. Խ. Պապանյան.** L-ցիստեինի և դիմեթիլսուլֆօքսիդի փոխազդեցությունը մեղմ պայմաններում էջ. 11–14

ԻԿ սպեկտրադիտման միջոցով ուսումնասիրվել է L-ցիստեինի և դիմեթիլսուլֆօքսիդի փոխազդեցության ռեակցիան ջրային միջավայրում: Հայտնաբերվել է, որ մեղմ պայմաններում լուծույթում փոխազդեցությունը չի սահմանափակվում միայն սովատացիայի գործընթացներով, այլ տեղի է

ունենում L-ցիստեինի հետագա օքսիդացում, որը բերում է L-ցիստինի դիմեթիլսուլֆիդի և ջրի զոյացմանը:

**Ռ. Տ. Սկրոչյան, Ս. Կ. Գրիգորյան, Ա. Ռ. Սկրոչյան, Ռ. Պ. Մխիթարյան.**  
Ռուբիդիումի, ալյումինի և տերբիումի բարդ ֆտորիդային համակարգերի  
ֆիզիկաքիմիական հետազոտությունը էջ. 15–17

Ջերմագրական, բյուրեղաօպտիկական և ռենտգենագրական եղանակներով ուսումնասիրվել են հալոյթային համակարգերը: Ապացուցվել է, որ այդ համակարգում առաջանում է քիմիական մեկ միացություն՝  $3\text{Rb}_3\text{TbF}_6 \cdot \text{Rb}_3\text{AlF}_6$ , որը հալվում է առանց քայքայվելու և երկու առաջնային պինդ լուծույթներ՝  $\alpha$  և  $\beta$ :

**Ա. Բ. Մարտիրոսյան.** Անլուծելի պերօքսուլֆատներից ստացվող ՕՄ ռադիկալների և  
նատրիումի լաուրիլէթօքսիսուլֆատի փոխազդեցության հետազոտությունը էջ. 18–22

Հետազոտվել է նատրիումի լաուրիլէթօքսիսուլֆատի ՕՄ ռադիկալների հետ փոխազդելու ունակությունը, որոնք առաջանում են  $\text{ZnO} \cdot 0.8\text{H}_2\text{O}_2$ ,  $\text{MgO} \cdot 0.42\text{H}_2\text{O}_2$ ,  $\text{CaCO}_3 \cdot 0.21\text{H}_2\text{O}_2$  պերօքսուլֆատների ջրային լուծույթների ՈՒՄ ճառագայթման արդյունքում: ՕՄ նյութի օքսիդացումը ռադիկալներով իրականացվել է մրցակցող ռեակցիայի եղանակով: Ստացված միաձուլումներում  $\text{H}_2\text{O}_2$ -ի քանակությունը որոշվել է պերմանգանատիական տիտրման եղանակով: Օպտիկական խտությունը չափվել է էլեկտրոնային սպեկրադիտման եղանակով: Արդյունքները ցույց են տվել, որ ստացված պերօքսուլֆատներն արագացնում են ՊՆԴՄԱ+ՕՄ ռեակցիայի արագությունը: Ստացվել են նշված ռեակցիայի արագության հաստատունի արժեքները:

**Ս. Ա. Հայրապետյան, Լ. Ռ. Վարդանյան, Ռ. Լ. Վարդանյան.** Ուրց սողացողի  
(*Thymus Serpyllum* L.) էքստրակտների հակաօքսիդային ակտիվացումը  
կումոլի օքսիդացման ռեակցիայում էջ. 23–31

Աշխատանքում հետազոտվել են տարբեր բարձրությունների վրա աճող ուրց սողացողի էթիլացետատային էքստրակտների հակաօքսիդային հատկությունները: Ցույց է տրված, որ առավելագույն քանակությամբ հակաօքսիդիչներ (14,06%) պարունակվում են ուրցի էթիլացետատային էքստրակտում, որն աճում է ծովի մակարդակից 650 մ բարձրության վրա, որտեղ ջերմաստիճանն արևի տակ անցնում է  $30^\circ\text{C}$ -ից: Ցույց է տրված նաև, որ հետազոտվող լուծիչներից ուրց սողացողի մեջ պարունակվող հակաօքսի-

դիչների համար լավագույն էքստրագենտ է հանդիսանում առավելագույն բևեռայնությամբ լուծիչը՝ ացետոնը:

**L. Ս. Մանուկյան. Հոլի լայնական էֆեկտն էլեկտրոլիտների նոսրացված բինար լուծույթներում** էջ. 32–39

Էլեկտրոլիտների նոսրացված բինար լուծույթների համար ստացված են Հոլի հաստատունի, Հոլի անկյան և Հոլի պոտենցիալների լայնական տարբերության վերլուծական կախվածությունները մագնիսական ինդուկցիայի մեծությունից: Յույց է տրված, որ համաձայն փարձարարական տվյալների՝ այդ կախվածություններն ունեն ոչ գծային բնույթ:

Տարբեր իոնների համար գնահատված և եղած փորձնական արդյունքների հետ են համեմատված մագնիսական ինդուկցիայի էքստրենալ արժեքները, որոնց դեպքում Հոլի անկյունը և Հոլի պոտենցիալների լայնական տարբերությունն ընդունում են առավելագույն արժեքներ: Մագնիսական ինդուկցիայի էքստրենալ արժեքները համարվում են օպտիմալ արժեքներ, քանի որ այդ արժեքների դեպքում Հոլի էֆեկտը տվյալ լուծույթում ավելի ուժեղ է դրսևորվում:

## ԿՆՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Հ. Մ. Դավթյան, Ս. Պ. Հովհաննիսյան, Հ. Մ. Կարապետյան. *Asp. niger* R3 բորբոսասանկերի L-ամինաթթվային օքսիդազի ինդուկցման օպտիմալ պայմանները** էջ. 40–43

Նախորդ հետազոտություններում ցույց էր տրված, որ *Asp. niger* R3 բորբոսասանկերի էքստրակտներում L-ամինաթթվային օքսիդազի ակտիվություն չի դրսևորվում և միայն որոշ պերօքսիտմալ ֆրակցիաներում այն տեղի է ունենում: Ջրածնի պերօքսիդ ավելացնելիս սննդամիջավայրում ինդուկցվում է L-ամինաթթվային օքսիդազ: Աշխատանքի նպատակն էր հետազոտել ֆերմենտային ակտիվության ինդուկցիան՝ ինկուբացիոն միջավայրում ջրածնի պերօքսիդ ավելացնելիս: Փորձերի արդյունքները միանշանակ ցույց են տալիս, որ ջրածնի պերօքսիդ ավելացնելիս *Asp. niger* R3-ի՝ բորբոսասանկերի էքստրակտներում, ինդուկցվում է L-ամինաթթվային օքսիդազ, ընդ որում ամենաարդյունավետն է համարվում ջրածնի պերօքսիդի օգտագործումը L-պլանին սուբստրատի դեպքում՝ 0,001 մկՄ կոնցենտրացիայով, իսկ L-մեթիոնինի դեպքում՝ 0,003 մկՄ կոնցենտրացիայով:

**Ն. Հ. Մարգարյան.** Ոչ կենսածին գործոնների ազդեցությունը *Darevskia raddei* տեսակի ժայռային մողեսի՝ *Spauligodon saxicolae* գեոնեմատոդով վարակվածության վրա  
էջ. 44–47

Հետազոտվել է *Darevskia raddei* տեսակի ժայռային մողեսների վարակվածությունը *Spauligodon saxicolae* տեսակի գեոնեմատոդով: Տվյալ հեղինակը վարակվածության համեմատական վերլուծությունը ցույց է տվել վարակման էքստենսիվության կախվածություն ոչ կենսածին գործոններից:

**Բ. Հ. Խաչատրյան, Վ. Վ. Աբրահամյան.** Կաթնաթթվի քանակի և pH-ի փոփոխություններն էլիմոկոկոզով հիվանդ խոշոր եղջրավոր անասունների մսի մեջ  
էջ. 48–51

Աշխատանքում ուսումնասիրվել են 10-ական առողջ և էլիմոկոկոզով վարակված անասունների մսեղիքի մուշներ, կաթնաթթվի կոնցենտրացիայի և pH-ի փոփոխությունների համեմատման նպատակով առողջ և վարակված մսեղիքում, որոնք էապես ազդում են մսի հասունացման գործընթացի վրա: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ էլիմոկոկոզով հիվանդ անասունների մսի հասունացումն ընթանում է մակերեսորեն՝ նպաստելով երկրորդային մանրէների ներթափանցմանը մսի մեջ, ինչը վատացնում է նրա համային հատկությունները և կրճատում պահապանման տևողությունը: